

րի գնտակին երեսէն չափելով 29 բթաչափի կը հասնի . աս գծին դիմացը գրուած կ'ըլլայ անդիմա . այսինքն թէ օդը շատ աղէկ է : Լսենէն վարի գիծը , որ նոյնպէս գնտակին երեսէն առնելով քսանըեթներորդ բթաչափը կուգայ , կը ցուցնէ սնդկին խիստ ցած աստիճանը . աս գծին դիմացն ալ գրուած է հրէի : Լսկէ մէկ աստիճան վեր , այսինքն 28 բթաչափին դիմացը գրուած է փոփոխական : Լսկէ քիչ մը վար եղած գծին առջեւ գրած է հողմ անշրտ . վասն զի հողմ ալ անձրեւային օդի պէս խողովակին սնդիկը կ'իջեցնէ . Շատերը այլեայլ ձեւերով կը շինեն օդաչափը . մեր հոս բացատրածը ամենէն պարզն է :

Չ. Գաշարժ ' երկաթի ճանապարհ :

ՇԻՒԹԼԸՎՈՐԹ անգղիացին նոր կերպով ջրաշարժ մեքենայ մը առաջարկեց , և հրամանագիր առաւ որ ինքը միայն կարենայ գործածել աս գիւտը երկաթի ճամբաներու վըրայ : — Սեքենային շարժիչ զօրութիւնը ջրին վազուածքը չէ , հապա ջրին ճնշումն է . այսինքն որովհետեւ 32 ոտնաչափ բարձրութեւ ջրին սիւնակին ճնշումը հաւասար է ամբողջ մթնոլորտի մը ճնշմանը , հեղինակը մտածեր է որ ջրին սիւնակը թէ որ 60 մեթր բարձրացնելու ըլլայ , անոր տուած ճնշումը հինգ կամ վեց մթնոլորտի ծանրութեան կը հաւասարի , աս զօրութիւնը 'ի գործ դնելու ըլլայ՝ մեքենայ մը շարժելու նէ , մեքենան մէկ ժամու մէջ 44 քիլոմեթր տեղ կրնայ վազել : Ուստի մտածեց որ երկրթէ ճամբուն երկայնութեանը վրայ շինուին ջրի զանազան ընդունարաններ՝ 60 մեթր բարձրութեամբ , և ան ջուրը խողովակներով հաղորդուի շարժիչ մեքենային : Լս բանիս

գործածութիւնը որչափ ալ դժուարին երևնայ , հեղինակը ամենայն վստահութեամբ կը խոստանայ որ չէ թէ միայն կը յաջողի , հապա նաև գործածութիւնն ու ծախքն ալ հասարակ շոգեկառքերէն անհամեմատ կերպով աւելի շահաւոր կ'ըլլայ :

Սեծ դիտարկ :

ՈՒՍ կոմսը Լոնդոնի մէջ հայեալ գիտակ մը շինել տուաւ որ միայն հայրենի ծանրութիւնն է 1015 քիլոկրամ . խողովակին մէջի տրամագիծն է 2 մեթր ու 40 հարիւրամեթր . խողովակին երկայնութիւնը 23,50 : Լոն խողովակը հաստ տախտակներէ շինած է՝ երկաթէ շրջանակներով կապուած , և բոլորը մէկէն հաստաւ տուն ծխնիներու վրայ կը պտրտի : Լս հսկայաձև դիտակը չկրնար երկընքին ամէն դին դառնալ , հապա հազիւ թէ միջօրէին երկու կողմը եօթնական աստիճան . անոր համար երկու հաստատուն պատերու մէջ կախուած է աս դիտակը , ու մեծամեծ անիւներով ամէն մէկ վայրկեանին յարմար հորիզոնական շարժում կ'առնէ միջօրէականին վրայ . հակաքարշ ծանրոցներով ալ դիւրաւ կ'ելլէ ու կ'իջնայ՝ ինչպէս որ դիտողը ուզէ :

ԲՆԱԿԱՆ ՊԼՏՄՈՒԹԻՒՆ

Փարսանի մակը :

ԼԵՂՈՍԻ կոկորդիլոսին մասնաւոր թշնամին մէկ պզտի կենդանի մըն է որ Հիլոս կամ Փարաւոնի մուկ կ'ըսուի : Լեւորդապաշտ Լգիպտացիները կոկորդիլոսը աստուծոյ տեղ դրած կը պաշտէին . անոր նուիրած էին Լըսինոյէ քաղաքը , ու սատակը իրենց թագաւորներուն գերեզմանին